ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցիչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանքներում ընդգրկվելիք նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

- Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:

- Կարճ պատասխանով առաջադրանքները հետևյալ տեսակների են.

  - Ճիշտ հաջորդականության
  - Համապատասխանեցման
  - Բաց թողնված միավորների ընտրության
  - Ըստ առաջադրանքի պահանջի բոլոր ճիշտ կամ սխալ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ: Այդ առաջադրանքներում տրվում են 7 պնդումներ, շարքեր և այլն, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: **Ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում:**

Կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նշել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ և լիարժեք պատասխանը: Սխալ, թերի կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում:
Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համապատասխանող բոլոր միավորները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Տեսակ	Քանակ	Միավոր
Ընտրովի պատասխանով	45	45
Կարճ պատասխանով	15	15
Ընդամենը	60	60

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. *Ընտրվի պատասխանով առաջադրանք՝ (1 point)*

Mrs. Brown was so nervous that she could scarcely speak during the interview.
In this sentence, *scarcely* shows that:

1) Mrs. Brown spoke confidently and clearly.
2) Mrs. Brown spoke a lot without hesitation.
3) Mrs. Brown was almost unable to speak.
4) Mrs. Brown refused to speak during the interview.

2. Կարճ պատասխանով առաջադրանքներ՝

- ***Write the right order to make up a story. (1 point)***

1. First, they travel from their breeding grounds in North America to their wintering sites in Mexico.
2. During this journey, they face challenges like bad weather and a lack of food.
3. Then, as spring arrives, they head back north, laying eggs on milkweed plants.
4. Monarch butterflies, with their vibrant orange and black wings, start their migration each year.
5. Finally, this migration ensures the survival of the species and shows their incredible endurance.

- **Match the beginning and the end of the sentences. (two odd variants are given).** ***(1 point)***

A) Although the initial feedback was negative, investors	1) but unrelated topics were brought up during the meeting.
B) Not only has the company expanded its product line,	2) but it has also improved its customer support services.
C) Since the necessary documents are missing,	3) as if the marketing team adjusted its strategy accordingly.
D) Still a novelty in this sphere, the technology	4) gradually regained confidence in the project.
E) Had the head of the company implemented the changes sooner,	5) the team is unable to collect the required information.
	6) the accident on the production floor could have been prevented.
	7) needs more time to show its full potential.

- ***Fill in the gaps with the correct choice. (1 point)***

A few hours later, eating dinner and _____ her second dose of Limeren that day, Kate couldn't deny she _____ extra relaxed. Maybe it was the drug, or maybe it was just being in a place where nothing _____ of her. There were books to read, films to watch and even board games and puzzles. It was nothing like her normal days, sending job application after job application and _____ to stressful interviews that never _____ to a job.

1.going, 2. felt, 3. leading, 4. having taken, 5. was expecting, 6. led, 7. was expected

- ***Which of the following sentences correctly use verb forms in conditional sentences? (1 point)***

1) We'll go ahead with the picnic if the weather stays sunny.

2) If I were you, I will apologize to the committee immediately.

3) He will have submitted his paper earlier, if he knew about the deadline.

4) If he had revised more carefully, he would not have made so many mistakes.

5) Our lifestyle would not be so dependent on devices, if technological progress is slowing down.

6) The company invests in renewable energy, as long as they reduced costs significantly.

7) Keep some extra cash with you in case the card machine doesn't work.

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Անգլերեն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները և գործող դասագրքերը:

Տեքստի ընկալում

Քերականություն

Հնչաբանություն

Գոյական անուն. թիվ, հոլով:
Հոդ. անորոշ, որոշյալ և հոդի բացակայություն:
Ածական անուն. համեմատության աստիճանները, կազմության առանձնահատկությունները, համեմատական կառույցները:

Թվական անուն. Քանակական և դասական թվականներ:

Դերանուն. Անձնական, ստացական, ցուցական, անորոշ, որոշյալ, ժխտական, հարցական, հարաբերական, անդրադարձ, փոխադարձ:

Բայ. Բայի հիմնական ձևերը, կանոնավոր և անկանոն բայեր, անցողական և անանցողական բայեր, լիիմաստ բայեր, օժանդակ բայեր, բայ-հանգույց:

Բայի ժամանակները (Present, Past,Future, Future-in-the-Past) և ժամանակային խմբերը (Indefinite, Continuous, Perfect, Perfect Continuous): Ժամանակների համաձայնեցում:

Բայի եղանակը (Indicative, Imperative, Subjunctive), սեռը (Active, Passive):

Բայի անդեմ ձևերը (Infinitive, Gerund, Participle I, Participle II):

Եղանակավորող բայերը և դրանց համարժեքները (can/could, may/might, must, should, would, ought to, need, be able to, have to, be to….):

Մակբայ. Մակբայի տեսակները, համեմատության աստիճանները, կազմության առանձնահատկությունները:

Նախդիր. Նախդիրների գործածությունը ըստ իմաստի, նախդրավոր բայեր և արտահայտություններ:

Շաղկապ. (համադասական, ստորադասական) և կապակցող բառեր:

Շարահյուսություն

Նախադասության տիպերն ըստ կազմության. պարզ (համառոտ և ընդարձակ) նախադասություններ, բարդ (համադասական և ստորադասական) նախադասություններ, գլխավոր և երկրորդական նախադասություններ, երկրորդական նախադասության տիպերը: Նախադասությունների դասակարգումն ըստ նպատակի (պատմողական, հարցական, ժխտական) և դրանց շարադասությունը: Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Անդեմ նախադասություններ: Հարցական նախադասությունների տիպերը (General, Special, Alternative, Disjunctive): Ենթակայի և ստորոգյալի համաձայնեցում: Շրջուն շարադասություն:

Ուղղակի և անուղղակի խոսք, փոխակերպման առանձնահատկությունները:

Բառագիտություն

Բառակազմություն

Ածանցում և բառաբարդում, անգլերենի առավել գործածական գոյականակերտ, ածականակերտ, թվականակերտ, մակբայակերտ վերջածանցներ և նախածանցներ:

Բառապաշար

Բառեր և արտահայտություններ, բազմիմաստ բառեր, հոմանիշներ և հականիշներ, դարձվածքներ (կայուն բառակապակցություններ):